ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«01» դեկտեմբերի 2021թ. № 406

ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի ԹԻՎ 85 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ, 60-րդ և 62-րդ կետերով, հիմք ընդունելով «Տարոն Սերոբյան» Ա/Ձ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006JOS9RCS) և Ստասիկ Գրիգորի Պողոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել 06-006-0490-0020 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի ճշգրտված հատակագիծը՝ 0,12834 հեկտար մակերեսով:

2. Սպիտակի քաղաքապետի 2008 թվականի ապրիլի 14-ի «Սպիտակ քաղաքի բնակիչ Ստասիկ Գրիգորի Պողոսյանի տնամերձ հողամասը որպես վերջինիս սեփականություն ճանաչելու մասին» թիվ 85 որոշման մեջ կատարել փոփոխություններ.

1) որոշման վերնագրում նշված «տնամերձ հողամասը» բառերը փոխարինել «անշարժ գույքը» բառերով:

2) որոշման 1-ին կետում գրված «9ա» թիվը փոխարինել «9/1» թվերով, «0,1269» թիվը փոխարինել «0,12834» թվով, «622,1» թիվը փոխարինել «737,9» թվով:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «ք.Սպիտակ, Այգեստան փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 9/1» հասցեն (փոստային դասիչ՝ 1802):

4. Սույն որոշմամբ կատարված փոփոխությունները և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 1
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան; Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«_06_» դեկտեմբերի 2021թ. № 407

ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 75-Ա որոշումը և Կադաստրի կոմիտեի ներկայացուցիչ Արմինե Մաթոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակի քաղաքապետարանի և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկի միջև 2012 թվականի մարտի 21-ին կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31 ներառյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. դեկտեմբերի _1_
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«02» դեկտեմբերի 2021թ. № 408

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ԹԻՎ 406 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006EMDZYU1) ՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 1-ի «Սպիտակի քաղաքապետի 2008 թվականի ապրիլի 14-ի թիվ 85 որոշման մեջ փոփոխություններ կատարելու, հողամասի ճշգրտված հատակագիծը հաստատելու և հասցե տրամադրելու մասին» թիվ 406 որոշման նախաբանում գրված «06006JOS9RCS» թիվը փոփոխել «06006EMDZYU1» թվով:

2. Սույն որոշմամբ կատարված փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 2
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«06» դեկտեմբերի 2021թ. № 409

ՄԵՐԻ ԱԼԲԵՐՏԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԱՆՉԱՓԱՀԱՍ ՆՎԱՐԴ ՍԱՍՈՒՆԻ ՄԻՆԱՍՅԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, և 37-րդ հոդվածի 1-3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ. հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությամբ, հիմք ընդունելով Մերի Ալբերտի Սարգսյանի դիմումը, Սպիտակ համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 3-ի եզրակացությունը՝ ***որոշում եմ.***

1. Մերի Ալբերտի Սարգսյանին նշանակել անչափահաս Նվարդ Սասունի Մինասյանի (ծնված 03.09.2015թ.) խնամակալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 6
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«06» դեկտեմբերի 2021թ. № 410

ՍԻՐՎԱՐԴ ՄԻԽԱՅԵԼԻ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ԱՆՉԱՓԱՀԱՍ ՌՈԶԻ ՍԱՍՈՒՆԻ ՄԻՆԱՍՅԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, և 37-րդ հոդվածի 1-3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ. հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությամբ, հիմք ընդունելով Մերի Ալբերտի Սարգսյանի դիմումը, Սպիտակ համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 3-ի եզրակացությունը՝ ***որոշում եմ.***

1. Սիրվարդ Միխայելի Մինասյանին նշանակել անչափահաս Ռոզի Սասունի Մինասյանի (ծնված 10.01.2013թ.) խնամակալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 6
ք. Սպիտակ